ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.05.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը			«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
1.2 ՀՎՀՀ-ն			00116201
1.3 Գտնվելու վայրը			ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 1 ՆՐԲ. 14 ԲՆ.106
1.4 Պետական գրանցման համարը			211.171.132862
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը			2012-08-17
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)			+(374)10123456
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			www.womensupportcenter.org
1.8 Էլեկտրոնային փոստը			wsc.armenia@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը		Պաշտոնը
ՄԱՐԻ	ՄԱԹՈՍՅԱՆ		Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցել ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանը Անհրաժեշտության դեպքում աջակցել ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը			24
4.2 Կամավորների թիվը			5
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը			10

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ	Հայաստան	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն	Ավարտված
2	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ	Հայաստան	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների մատուցում	Ավարտված
3	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ	Հայաստան	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների մատուցում	Ավարտված
4	Վարձակալության, կոմունալ ծախսերի, սննդի գծով աջակցություն, առաջնային բժշկական օգնության տրամադրում	Հայաստան	Վարձակալության, կոմունալ ծախսերի, սննդի գծով աջակցություն, առաջնային բժշկական օգնության տրամադրումը	Ավարտված

Digitally signed by HOVNANYAN ARMENUHI 6911710049
Date: 2024.05.30 14:19:20 AMT

5	Հայաստանում գյուղական ձեռնարկատիրության առաջատար կանայք	Հայաստան	Աջակցության տրամադրում ընտանեկան բռնության և թրաֆիքինգի ենթարկված կանանց և երեխաներին ֆիզիկապես և հոգեպես վերականգնվելու նպատակով: Աջակցությունը Իրավաբանական և հոգեբանական խորհրդատվության տրամադրում,	Ավարտված
6	Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում	Հայաստան	Կանանց նկատմամբ բռնության հաղթահարում և գենդերային հավասարության ամրապնդում	Ընթացքի մեջ
7	Դու կարող ես հաղթահարել բռնությունը» հանրային արշավ	Հայաստան	Ընտանեկան բռնության զոհերին և ավելի լայն հանրությանը իրազեկել Կանանց աջակցման կենտրոնի գործունեության և մատուցվող ծառայությունների մասին բարձրացնելով այդ ծառայությունների և ապաստարանների հասանելիությունը վերջիններիս համար	Ավարտված
8	Թրաֆիքինգի և ընտանեկան բռնության կանխարգելում և զոհերի աջակցություն	Հայաստան	Հոգալ Կանանց աջակցման կենտրոնի և 2 ապաստարանների կոմունալ ծախսերը, աջակցել ապաստարանում գտնվող կանանց և երեխաների համար սննդի և հագուստի, ինչպես նաև հիգիենայի պարագաների ձեռքբերմանը, հոգալ շահառուների՝ ապաստարան փոխադրման ճանապարհածախսը:	Ընթացքի մեջ
9	Ամրապնդելով ընտանեկան բռնության դեմ արձագանքը Հայաստանում	Հայաստան	ԸԲԱԿ-ի համար նախատեսված դասընթացավարների Տրավմա և վերականգնում Բռնության հետևանքները ընտանեկան բռնությունից մինչ քաղաքական ահաբեկչություն» գրքի հայերեն թարգմանություն, ԸԲ-ի վերաբերյալ 10 գրաֆիկայի մշակում	Ընթացքի մեջ
10	Հայաստանում ԸԲ-ի դեմ պայքարի և կանխարգելման կայուն մոտեցման ձևավորում	Հայաստան	Հայաստանում ԸԲ-ի դեմ պայքարի և կանխարգելման կայուն մոտեցման ձևավորումը	Ընթացքի մեջ
11	Հայաստանում ԸԲ դեմ պայքարի և կանխարգելման կայուն մոտեցման ձևավորում	Հայաստան	Կանանց աջակցման կենտրոնի տնային բռնության զոհերի համար կացարանի ուղղակի ծախսերը հոգալը	Ընթացքի մեջ
12	Կանանց աջակցման կենտրոնի գրասենյակի և ապաստարանների բարեկարգում	Հայաստան	Կանանց աջակցման կենտրոնի գրասենյակի և ապաստարանների բարեկարգումը	Ավարտված
13	Հավասար-ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում	Հայաստան	Գենդերային հավասարությունը	Ընթացքի մեջ
14	Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար անկողնային պարագաներ, հիգիենայի պարագաներ և սնունդ տրամադրելու համար	Հայաստան	Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին անկողնային պարագաներ, հիգիենայի պարագաներ և սնունդ տրամադրելը	Ընթացքի մեջ
15	Արցախից տեղահանվածներին վերաբնակեցման, հոգեբանական և իրավաբանական աջակցություն	Հայաստան	Արցախից տեղահանվածներին վերաբնակեցման, հոգեբանական և իրավաբանական աջակցությունը	Ընթացքի մեջ
16	Գենդերային գնահատում և մարդասիրական օգնության բաշխում Հայաստանում բռնի տեղահանված կանանց և ընտանիքներին	Հայաստան	Գենդերային գնահատումը և մարդասիրական օգնության բաշխումը Հայաստանում բռնի տեղահանված կանանց և ընտանիքներին	Ընթացքի մեջ
17	Ապահով տարածք Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների համար Հայաստանում	Հայաստան	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների համար Հայաստանում ապահով տարածքի հարցում աջակցությունը	Ընթացքի մեջ
18	Պայքար ընտանեկան բռնություն դեմ Հայաստանում Կովիդ 19 և հետպատերազմյան շրջանում	Հայաստան	Պայքարը ընտանեկան բռնություն դեմ Հայաստանում՝ Կովիդ 19 և հետպատերազմյան շրջանում	Ընթացքի մեջ
19	Աջակցություն բռնության ենթարկված անձանց	Հայաստան	Աջակցությունը բռնության ենթարկված անձանց	Ընթացքի մեջ
20	Աջակցություն տեղահանված անձանց	Հայաստան	Աջակցությունը տեղահանված անձանց	Ընթացքի մեջ

21	Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ (ԿԼԱՍՍ)	Հայաստան	Հասանելի համայնքային սոցիալական ծառայությունների մատուցումը (ԿԼԱՍՍ)	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ	Հայաստան	Ավարտված	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն	Դրական
2	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ	Հայաստան	Ավարտված	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի	Դրական
3	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ	Հայաստան	Ավարտված	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների մատուցում	Դրական

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	420,644,729
8.2 Գույքը	1,229,500
Ընդամենը	421,874,229

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	20,909,200	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	20,909,200	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	448,016,724
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1	Շենք, շինություն	2,858,333
2	Մեքենաներ, սարքավորումներ	2,173,299
3	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	2,651,176
4	Այլ հիմնական միջոցներ	2,127,350
Ընդամենը		457,826,882

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	20,909,200
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		20,909,200

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	-Ծառայությունների մատուցում -Բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայության արդյունքում տոկոսների ստացում	7,274,893	Կանոնադրական նպատակներով
Ընդամենը		7,274,893	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ. հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբկայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել **«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի** 2023 թվականի «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հասարակական կազմակերպությունների գործունեության մասին հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը:

Մեր կարծիքով, **«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի** կից ներկայացված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ

ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների

հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 30.05.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2024 14:10